

Lowell

Յուլի 29, 1949

Արժանաշնորհ  
Յ. Կարեն Քէնյ. Կառնեան  
Նախագահ պատ. Հոգաբարձութեան  
Լոզէի Կամայնքին

Մեր Փոխանորդը, Հոգ. Յ. Մարկո Վրո. Գալուստեան տեղեկագրած է ձեր Յուլի 13-ի ժողովի մասին, որ տեղի ունեցած է տեղւոյ մէջ, ի մասին Լոզէի մօտ գտնուող կարգ մը քաղաքներու Հայութեան Լոզէի Ս. Վարդանանց եկեղեցւոյ ծախին պատկանելիութեան:

Հետեւաբար այս տեղեկագրի հիման վրայ Ձեզ եւ Հոգաբարձութեանդ կը հարգեցնեմ ձեր Հեռուհեռու որոշումն ու կարգադրութիւնը:

Լոզէի Ս. Վարդանանց եկեղեցւոյ ծախին մաս պէտք է նկատուին՝ ՐԵՏԻՆԿ, ԿԷՏՅՈՐՏ, ԲՈՆՅՈՐՏ, ՆԷՄՈՒՅ, ՄԱՆԵԿՍՏՐՔ Եւ ՆԷՂԱԷԷՆ զեպի Հիւսիս եւ Արեւմուտք գտնուող քաղաքները, Ճիլղրէի եւ Մանչէսթըրի գծերով:

Հէյզլերհիլի Ս. Գր. Լուս. եկեղեցւոյն կը պատկանին՝ ԵՍՏՐՊՐԻ, ՆՐԱՊՐԻ ՓՈՐՔ Եւ զեպի Հիւսիս եւ արեւմուտք գտնուող քաղաքները, Ետնթիւ եւ Կլասթըրի գծերով:

Գալով ՌԻԿԻՆ ԻՆՏՈՎՈՐԻ Եւ ՍԷՐԼԵՍ ՓՈՍՏՈՒ, ասանցմէ առաջինը գործնականապէս ինչպէս նաեւ միջանորութեամբ եւ նահանգային բաժանումով Լորենսի Ս. Կառն Եկեղեցւոյն մօտ ըլլալով՝ պէտք է մաս նկատուի նոյն ծախին:

Նոյնն է պարագան ՍԷՂԵՐՄ-ի եւ Փիլատի-ի՝ Գոսգանի Ս. Սրբորգութիւն եկեղեցւոյ նկատմամբ: Որով ՍԷՂԵՐՄ Փիլատի կը պատկանին Գոսգանի Ս. Սրբորգութիւն եկեղեցւոյն:

Միայն պէտք է կարծուր ուշադրութիւն գարձնել Հեռուհեռու ինչպէս:

Ոնիւ Հայ Երիտօրնեայ Ընտանիք՝ իրատեսք ունի ինք որոշելու այն եկեղեցիին որուն կ'ուզէ պատկանիլ: Եթէ ուրեմն այս երկու կամ երեք քաղաքներն /Ուելս Ինտովըր, ՍԷՂԵՐՄ եւ Փիլատի/ ոնիւ Ընտանիք կամ անձ արամադրութիւն արտել Ձեր եկեղեցիին գործուն կամ ոչ գործուն անդամ նկատուի՝ ըստ այնմ կ'արձանագրէք Ձեր տեսրակներուն մէջ եւ գտնուր կը նկատէք Ձեզի ծիական:

Քանի որ այս երեք քաղաքներուն մէջ ալ Հոգաբարձութիւն  
գոյութիւն չունի մեր կանոնադրութեան 30-րդ 42-ի տրամադրու-  
թիւնը խնդրոյ առարկայ չըլլալու եւ մենք սոյն գրով Ձեզի իրաւասութիւն  
տուած կ'ըլլանք ըստ վերոյգրեւելին, եւ Հրահանգած ըստ այնմ ընթանալ:

Հայրական սիրոյ ողջունիւ  
Մնամք ազօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

*for [unclear] [unclear]*

*Lowell*

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

( 1949 Դեկտ. 12 - 1950 Դեկ. 31 )

Ա. - ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ.-

Յիսուս շինգ Կիրակիներու այս շրջանին մէջ, անձամբ 44 Կիրակիներ կատարած ենք մեր Եկեղեցւոյն մէջ առաւօտեան արարողութիւն եւ Ս. Պատարագ: 5 Կիրակիներ (մեծ Պահքի առիթով) ձաշու եւ Արեւազալի արարողութիւններ: Մէկ Կիրակի միայն արարողութիւն, ելեկտրականութեան խնդրութեան պատճառաւ: 2 Կիրակիներ այլ Եկեղեցականներ Ս. Պատարագ մատուցած են մեր Եկեղեցւոյն մէջ: Իսկ երկու Կիրակիներ բնաւ արարողութիւն չէ եղած մեր Եկեղեցւոյն մէջ մեր առած արձակուրդին պատճառաւ:

Կիրակնօրեայ արարողութիւններէն դուրս Եկեղեցւոյս մէջ կատարուած է Մեծ Պահքի վարագուրման արարողութիւն, Դռնբացէքի, Ոտընլուայի Խաւարումի եւ աւագ Ուրբաթի երկու արարողութիւնները: Եւ ի վերջոյ երկու ձրագալոյցի Պատարագներ:

Առհասարակ գրեթէ ամէն արարողութեան ներկայ եղած են Եկեղեցւոյս երկու ուրախակիր սարկաւազները Պարոնայք Մերկեր Ահարոնեան եւ Մովսէս Մլքիկեան երբեմն ալ Պրն. Կարապետ Կիրակոսեան: Եւ Դպրաց դասը բոլոր Պատարագներուն անխաբան ներկայ եղած է:

Ամբողջ շրջանին տուած ենք 44 Հայերէն քարոզ եւ 19 անգլերէն քարոզներ:

Բ. - ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Մեր Եկեղեցւոյն մէջ անձամբ կատարած ենք 7 Մկրտութիւն 7 Պսակ, 5 Թաղում 2 նշանտուք եւ մէկ Դրոշմի Խորհուրդ:

Գ. - ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ.-

Հետեւելով Հայաստանեայց Եկեղեցւոյ Հնաւանդ Սովորութեան տարւոյս մէջ 78 հոգի խոստովանցելով Թրիստոսի Ս. Մարնով եւ Արիւնով հաղորդած ենք:

Դ. - ՏՈՒՆՕՐՀՆԵՔ.-

Կրթած ենք մի միայն 34 տղան եւ մէկ Ագարակի օրհնութիւն կատարել այս շրջանին: Ջատիկի Տունօրհնէքը զանց ըրինք մեր դպրոցական եւ ուսանողական աշխատութեանց խճողեալ ըլլալուն պատճառաւ:

Ե. - ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Այս շրջանին կատարած ենք 111 Հիւանդներու այցելութիւն: 27 պարզ Միակն այցելութիւն եւ 18 մասնաւոր այցելութիւն մեր ծուխի ընտանիքներուն զանազան կարեւոր արիթներով: 8 ծերանոցի այցելութիւն: 5 անգամ ալ այցելած ենք քաղաքիս մէջ արկածի ենթարկուած եւ հիւանդանոց պահող վուսթրքի ընտանիքի մը:

Զ. - ԻՈՂՈՒՆՆԵՐ.-

2.- Ժողովներ.-

Ձանալով ներկայ ըլլալ բոլոր այն ժողովներուն որնք կը կատարուին մեր Եկեղեցւոյն ենթակայ կազմակերպութեանց կամ յանձնախումբերու կողմէ, կըրցած ենք նախագահել Միայն 3 ընդհանուր Անդամական, 11 Հոգաբարձական 5 ՀԵԵԿԱ ի, 2 Տիկնանց Եկեղեցասիրացի, 6 Շինարարական Յանձնախումբի, 1 Հաշուեքննիչ եւ 1 Ընտրողական Յանձնախումբերու 5 Կիրակնօրեայի եւ 2 Խառն ժողովներու: Նաեւ 33 Հոգաբարձական եւ 9 ՀԵԵԿԱ ի դիւանի ժողովներուն: 10 անգամ ալ ներկայ եղած ենք Դպրաց դասու փորձերուն: 3 անգամ ալ Վեթերաններուն:

3.- Զեռնարկներ.-

Այս շրջանի մեր կամ պա տկան մարմնոյն նախաձեռնութեամբ կատարուած են հետեւեալները:

- 1.- Դեկտեմբեր 23, Հայ Մանուկներուն տրուած Հաւաքոյթ Հայ Վեթերաններու կողմէ.
- 2.- Յունուար 29, Վեթերաններու Հաւաքոյթ ուր խօսուելու կանչուած էինք:
- 3.- Փետրուար 6, Դպրաց դասու Անդամ Հաւաքման արշաւ:
- 4.- Փետրուար 19, Ճաշկերոյթ Վարդանանց եւ Հովուի Ա. Տարեդարձին առիթով:
- 5.- Մարտ 5, Բանախօսութիւն ՀԵԵԿԱ ի կողմէ տրուած Մեծ Պահքի առիթով
- 6.- Մարտ 12, " " " " " "
- 7.- Մարտ 19, Տիկնանց Մեծ Պահքի Քիւմիւթի բարձի " " " "
- 8.- Մայիս 7, ՀԵԵԿԱ ի Տարեկան Խորհուրդ
- 9.- Յունիս 2, Կիրակնօրեայ Դպրոցի Ամսվերջի հանդէս
- 10.- Յունիս 27, Հայ Դպրոցի Ամսվերջի հանդէս
- 12.- Յուլիս 16, Տարեկան Դաշտահանդէս
- 13.- Յուլիս 21, Դպրաց դասու կերթայ 36 հոգիով երգելու իսթ Ռինճի մէջ:
- 14.- Օգոստոս 17, Հայ Դպրոցի Սովազնացութիւն, Տիկնանց Հոգատարութեամբ:
- 15.- Հոկտեմբեր 1, Ճաշկերոյթ Դպրաց դասին ի յարգանս Առաջնորդ Հօր ներկայութեամբ:
- 16.- Հոկտեմբեր 2, Բանախօսութիւն Առաջնորդ Հօր կողմէ ՀԵԵԿԱ ի կանչով:
- 17.- Հոկտեմբեր 27, Կիրակնօրեայ Դպրոցի Հալովին Բարձի:
- 18.- Հոկտեմբեր 29, Բանախօսութիւն ՀԵԵԿԱ ի կողմէ Թարգմանչաց առիթով:
- 19.- Նոյեմբեր, 25, 26, Երկրորդ Տարեկան Պագար:
- 20.- Դեկտեմբեր 6, Բանախօսութիւն ՀԵԵԿԱ ի կողմէ Վեր. Պլէքպրոն Խօսող:
- 21.- Դեկտեմբեր 22, Հայ մանուկներուն տրուած Հաւաքոյթ Հայ Վեթերաններու կողմէ.

Ը.- Մեր ՀԵՏԱՊԸՆԴԱՍ ԳՈՐԾԵՐԷՆ.-

1.- Մեր Համայնքին եւ ենթաթեմերուն մէջ գտնուող մեր Եկեղեցւոյն զաւակները աւելի մօտէն եւ ճշգրտօրէն ճանչնալու մտք, առանձին առանձինն այցելած ենք աւելի քան 220 տուններ Լովելի, Մէնչէսթրի, Նէշուէի, եւ Գոնզըրտի մէջ: Իւրաքանչիւր ընտանիքին շատ մը հարցումներ ընելով ըրած ու պահած ենք արձանագրութիւն: Այս աշխատանքը գրեթէ լրացուած վրայ է:

2.- Դարձեալ մեր ժողովրդեան հետ աւելի յաճախ յարաբերութեան մէջ մտնալու մտք, 1950 ի Յունուարին սկսանք տպել „ԱՌԱՋՆՈՐԴ“, անուն ամսաթերթիկ մը Հայերէն եւ անգլերէն բաժիններով:

3.- Հայերէն Դասաւանդութիւն.- Մեր Դպրոցին Ուսուցիչ Յրն. Էմմանուէլ Կէօքճեանի ՄԱԿ ի մէջ գործ մը ստացած ըլլալուն, եւ հետեւաբար ուսուցչութիւն ընելու անկարող ըլլալուն, ստիպուեցանք յանցն առնել,

եւ անձամբ շարունակել Հայ Դպրոցի Դասաւանդութիւնը: Մեծերուն ալ Հայերէն սորուելու առիթ մը ընծայելու մտօք: Յունուարի 14ին Շաբաթը մէկ ժամ Հայերէն դաս տուինք, 20 շաբաթ իրարու ետեւէ: Արձակուրդէն վերջ, Հոկտեմբեր 10 կրկին սկսանք թէ փոքրերուն եւ թէ Մեծերուն Հայերէն դասաւանդելը: Այժմ ունինք 12 հոգի փոքրերու բաժնին մէջ եւ 6 հոգի մեծերու բաժնին մէջ:

4.- Բաւական երկար ատեն տուինք Այս տարուան Պագարի պատրաստութեան համար: Մանաւանդ Յայտագիր Գրքոյկ մը պատրաստելու համար: Աւելի քան 70 գործատերէրու մէկէ աւելի այցելեցինք անձամբ Տիկին Մարգարան-եանի հետ, նախ յայտարարութիւն հաւաքելու եւ ապա դրամը հաւաքելու:

5.- Գթթէ առանց յաջողելու այս տարի եւս փորձեցինք քանի մը տղոց սարկաւազութիւն վարժեցնել: Կամքէ անկախ անկախ պատճառներ արգելք եղան մեր յաջողութեան:

Թ.- ԲԱՎԱԿՈՒԹԻՒՆՍ.-  
-----

Որպէս ուսանող մինչեւ 1950 Յունիս 1 կը բնակիմ Քէմպրիճ դպրոցիս մէջ, եւ միայն շաբաթավերջերուն կուգամ Լոզել: Յունիս 2ին բոլորովին կը փոխադրուիմ Լոզել Ուսանողութեանս Եռամեայ շրջանը աւարտած ըլլալով: Յունիս 21ին Թելեֆոն մը կ'առնեմ եւ Հոկտեմբեր 11ին ալ ինքնաշարժ մը Հովուական պարտականութիւններս դիւրութեամբ եւ աւելի կատարեալ կերպով կարենալ կատարելու համար:

Սեպտեմբեր 25ին որպէս մասնաւոր Ուսանող կարճանագրուիմ Հարվըրտի Անտուածաբանական դպրոցը եւ շաբաթը երկու օր Պոստոն կերթեւեկեմ:

Ժ.- ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՄԷՋ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.-  
-----

- 1.- Բրովիտանս .- 1 Պատարագ 2 Պսակ
- 2.- Լօրէնս .- 2 Թաղում
- 3.- Պոսթոն .- 1 Թաղում
- 4.- Վթըրթաուն .- 1 Թաղում 1 նշանտուք:
- 5.- Պրիմվթըր .- 1 Թաղում

Հոկտ. 3-9 Կը մասնակցինք Տիթրոյթ գումարուած Երեսփոխանական ժողովին: Հոկտ. 22 Կը մասնակցինք Ուստրի նոր Եկեղեցւոյն անկիւնաքարի օծման:

ԺԱ.- ԱՅԼ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ ԱՅՅԸ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ.-  
-----

Յուլիս 2 ի Կիրակին Հոգջ. Տէր Ծեսրոպ Վրդ. Սէմէրեան Ս. Պատարագ կը մատուցանէ մեր Եկեղեցւոյն մէջ:

Պոկտ. 1ին Ամերիկահայոց բարեշնչ Առաջնորդ Տէր Տիգրան Սրբազան Եպիսկոպոս կը մատուցանէ Ս. Պատարագ իր Տարեկան Եօթեայ այցելութիւնը կատարելուն առիթով:

ԺԲ.- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԵՏ.-  
-----

Յուն. 21 ին դիմում կը կատարուի Առաջնորդին Յարութիւն Ծահինեանի Թաղման հարցին առընչութեամբ:

Փետր. 13 Պրն. Բապըթ Սարեան Լոզել կուգայ Մայր Եկեղեցւոյ Միներթեան Յանձնախումբ մը պատրաստելու մտօք:


Պեկտ. 10, Կեղրոն. Վաթչուութեան դիմում, Հովուի եւ ընտրողական Յանձնախումբի միջեւ ծագած անհամաձայնութեան մը պատճառաւ:

ԺԳ.-ՆՈՐ ՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ.-

- 1.- Եինութիւն Գրասենեակի Եկեղեցւոյ Ներքնասրահին մէջ:
- 2.- Եինութիւն Մկրտութեան Աւագանի մասնաւոր Խողովակին, որով ջուրը այժմ կը հոսի պարտէզին մէջ մաքուր գետնին տակ:
- 3.- Եկեղեցւոյ Խորանն ու Դասը կը ծածկուի գորգով:

Մեր ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ, Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութեանց հետ ալ առ հասարակ եղած է սիրալիր եւ խաղաղ: Ոչ մէկ առիթով վէճ կամ անհամաձայնութիւն ունեցած ենք մանաւանդ Հոգաբարձութեան հետ, որուն հետ մէնչէն շատ յարաբերութիւն մշակելու առիթ ունինք արդէն:

Մեր կարծիքով Ա. Տարիէն աւելի արգիւնաբար գործունէութիւն մը ունեցած ենք այս տարի եւ յիշուամբ կրնանք ըսել Տիրոջ հրահանգը, «,Ծառայք անպիտանք եմք զոր ինչ պարտ էք առնել արարք»,:



ԿԱՐԵՆ ԱՎԱԿԻԱՆ  
 ՀՈՎԻԻ ԼՈՎԵԼԻ ՍՐՔՈՑ ՎԱՐՊԱՆԱՆՑ  
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

Ներկայացուած  
 Փետրուար 25, 1951ի Կիրակին  
 Գումարուած Թնդամական Ժողովին  
 Լովել Մէս.

Lowell

Մարտ 8, 9151

Արժանաշնորհ  
Տ. Կարեն ԲՀՆԵ. Կառնեան  
Նախագահ Պատ. Հոգաբարձութեան  
Լովելի Համալսարան.

Ստացած ենք Մարտ 1 թուակիր Ձեր գրութիւնը, որով կը տեղեկացնէիք թէ, Ձեր նախագահութեամբ, կատարուած է Համալսարանի մասնակի Հոգաբարձական ընտրութիւնը, եւ ներկայացնելով ամբողջական նոր կազմը, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն, իբրեւ եկեղեցւոյ նախանձախնդիր, անձնուէք եւ պատուական անդամներ, կը վաւերացնենք եւ կը հաստատենք անոնց ընտրութիւնն ու պաշտօնները հետեւեալ կարգով:

Տեարք	Կարապետ Պարսպտեան	Ատենապետ
	Գրիգոր Գ. Գրիգորեան	Ատենադպիր
	Գրիգոր Կ. Գրիգորեան	Գանձապահ
	Ազատ Ճգնաւորեան	
	Ժիրայր Ահարոնեան	
	Համբարձում Մանոյեան	
	Մկրտիչ Ճգնաւորեան	

Կ'օրհնենք նորակազմ Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ վստահ ենք որ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյն պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ, կ'ըրան-կանք որ բոլորեն արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Ողջունիլ ժիրայր  
Մնամք ազօթակիր

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՍՐԲՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
ԼՈՎԷՂ, ՄԷՍ.



ST. VARTANANTZ  
ARMENIAN CHURCH  
60 Lawrence Street  
Lowell, Mass.

Tel. 2-8069

Տ. Կարէն Գինյ. Կոստանան  
Rev. Fr. GAREN GDANIAN  
Pastor

Մարտ 1, 1954

*Կար. Կոստանան  
3 ապր 54*

*Առաջնորդ  
Կոստանան*

Գերաշնորհ  
Տէր Տիրան Սրբազան Եպիսկոպոս  
Բարեջան Առաջնորդ Ամերիկա Հայոց  
Նիւ Եօրթ

Գերապատիւ Սրբազան Հայր

Լովելի Արքոց Վարդանանց Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Ընդհանուր Անդամական Ժողովը գումարու եցաւ Փետրուար 25 ի Կի-  
րակին մեր Նախագահութեամբ եւ 40 տրատու անդամոց ներկայութե-  
ամբ: Տարեկան տեղեկագրերու ընթերցումէն յետոյ կատարուեցաւ  
Հոգաբարձական Մասնակի ընտրութիւն: 55 քուէարկողներ եղած էին:  
Հետեւեալ չորս տրատու անդամները ընտրուեցան մեծամասնութեան  
քուէով. Պարոնայք, Գրիգոր Գ. Գրիգորեան (37), Գրիգոր Կ. Գրի-  
գորեան (35), Համբարձում Մանոյեան (45), Մկրտիչ Ճգնաւորեան (26):  
Ստորեւ կուտանք Եկեղեցւոյս նոր Հոգաբարձական կազմը նոր Դիւանով.

- Պրն. Կարապետ Պարպատեան Ատենապետ
- Պրն. Գրիգոր Գ. Գրիգորեան Ատենադպիր
- Պրն. Գրիգոր Կ. Գրիգորեան Գանձապահ
- Պրն. Ազատ Ճգնաւորեան
- Պրն. Ժիրայր Ահարոնեան
- Պրն. Համբարձում Մանոյեան
- Պրն. Մկրտիչ Ճգնաւորեան

Սրբազան Հայր, Ձեր սրբազնութեան ի գիտութիւն եւ ի  
տեղեկութիւն ուղարկելով այս ցանկը կը խնդրենք որ ձեր վաւերա-  
ցումը ուղարկէք մեզ առաջին առիթով, որպէսզի անոնք կարենան  
գործի սկսիլ:

Որդիական սիրով մնամ

*Կարէն Գինյան*



Lowell

Յունուար 11, 1952

Արժանաշնորհ  
Տ. Կարեն ԲՀՆԵ. Կտանեան  
Նախագահ պատ. Հոգաբարձութեան  
Լոս Անջելի համայնքին,

Ստացած ենք ամսոյս 1 թուակիր ձեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեամբ կատարուած է համայնքի մասնակի հոգաբարձական ընտրութիւնը, եւ ներկայացնելով ամբողջական նոր կազմը, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն իբրեւ եկեղեցւոյ նախանձախնդիր, անձնուէր եւ պատուական անդամներ, կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւնն ու պաշտօնները հետեւեալ կարգով. -

- |                          |            |
|--------------------------|------------|
| Տեարք Միքայէլ Նորգրացեան | Ատենապետ   |
| Գրիգոր Պ. Գրիգորեան      | Ատենադպիր  |
| Գրիգոր Կ. Գրիգորեան      | Գանձապահ   |
| Մկրտիչ Ճգնաւորեան        | Խորհրդական |
| Մանուկ Բարկեան           | "          |
| Սահակ Սարգիսեան          | "          |

Կօրհնենք նորակազմ հոգաբարձութեան բոլոր անդամները եւ վստահ ենք որ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյն պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար: Մղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ, կը ցանկանք որ անոնք բոլորեն արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Մնամք աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց  
Ամերիկայի

Handwritten notes and signatures in the top left corner.

ՍՐՔՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ  
ԽՈՒՆ. ՄԵՆ.



ST. VARTANANTZ  
ARMENIAN CHURCH  
60 Lawrence Street  
Lowell, Mass.

Tel. 2-8069

Տ. Կարէն Գինյ. Կտանեաճ  
Rev. Fr. GAREN GDANIAN  
Pastor

Թի՛ի.....

.....1.....ՅՈՒՆԻՈՒՄՔ. 19.5.2

Հոգեշնորհ  
Տէր Թորգոմ Վարդապետ  
Փոխանորդ Առաջնորդի Հայոց Ամերիկայի  
Նիւ Եօրթ, Ն. Ե.

Հոգեշնորհ Հայր Սուրբ

Հովելի Սրբոց Վարդանանց Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովը գումարուեցաւ անցնող տարւոյ  
Դեկտեմբերի 23 ի Կիրակին, կէսօրէ վերջ ժամը 3 ին Եկեղեցւոյս ներքնասը-  
րահին մէջ, 25 տրատու անդամներու ներկայութեամբ: Տարեկան տեղեկագրերու  
ընթերցումէն յետոյ կատարուեցաւ Հոգաբարձական մասնակի ընտրութիւն:

~~55 քուէարկողներ եղած էին: Ընտրութիւնը կատարուեցաւ 4 դազարող անձերու~~  
տեղը լեցնելու համար: Ընտրուողները եղան, հետեւեալ չորս անձերը .  
Պրն. Միթայէլ Նորդրացեան ( 41 քուով ), պրն. Անդրանիկ Կարապետեան (33)  
պրն. Յովհաննէս Ասլանեան (34) , պրն. Սահակ Սարգիսեան (32):  
Ասոնցմէ երկու հոգիներ մեզի յայտնեցին որ իրենք չեն փափաքիր Հոգաբար-  
ձական պաշտօն ստանցնել, եւ մենք ստիպուեցանք ~~որ~~ յաջորդ առաւելագոյն  
քուէ ստացողին ղիմել, եւ միայն կրցանք հաւանութիւնը առնել պն. Մանուկ  
Բարիկեանին որ 14 քուէ ստացած էր:

Ստորեւ կուտանք Եկեղեցւոյս Հոգաբարձական նոր կազմը  
իր ղիւանով, եւ կը փափաքինք որ զայն վաւերացնէք:

- |                         |           |
|-------------------------|-----------|
| Պրն. Միթայէլ Նորդրացեան | Ատենապետ  |
| „ Գրիգոր Պ. Գրիգորեան   | Ատենադպիր |
| „ Գրիգոր Կ. Գրիգորեան   | Գանձապահ  |
| „ Մկրտիչ ձգնաւորեան     |           |
| „ Մանուկ Բարիկեան       |           |
| „ Սահակ Սարգիսեան       |           |

Մնա՞ք սիրով Աղօթակից

Handwritten signature and text: Հովիւ Հովելի Հայոց

Թիւ 1779  
Ապրիլ 29, 1957

Գառուարժան  
Միակամ Խորհուրդ  
Սրբոց Կարգանաց Եկեղեցւոյ  
Լոյսիչ:

Ազնի սիրելի մեր:

Թուականէս երկու օր առաջ ի դիմաց Գառուարժան Միակամ Խորհուրդիդ գրն. ծակոք Կիրակոսեան եւ Համայնսիդ մրնափոխան գրն. Կարպետ Կարպետեան Հեռաձայնով մեզի ներկայացուցին եկեղեցւոյդ տնօրէն մարմիններու խան ժողովի գիտազուծիւնը ի մասին ծակիչ Հովի Արժանաշնորհ Տ. Կարէն ՅԸՆՅ. Կամենան ալուր փոխադրութեան:

Հեռաձայնի վրայ մենք պետք եղած լուսարարութիւնները առիճնք մեր երկու Գառուարժան պաշտօնեաներուն ձեռ Կարէնի ալուր փոխադրութեան կապակցութեամբ Այսու կուզենք մեր ուշադրութիւնը հրաւիրել այն դժուարին կացութեան որուն ենթարկուած է մեր Առաջնորդը թմբի Հոգեւորականութեան պակասին պատճառաւ: Ունինք խոշոր Համայնքներ որոնք մնացած են անհովի եւ իրք Առաջնորդ ստիպուած ենք ընել փոփոխութիւններ. Եւ այն իսկ երբեմն մէկ Հովիբ յանձնելով երկու Համայնք որպէսզի մեր ժողովուրդը անմիջապէս չմտայ:

Այն փոփոխութիւնը կտանելով երբեւ ի նշանակի որ մենք կանտեսենք մեր Համայնքը Կրնաց վտանգ ըլլալ որ ըստ կարելու այն պիտի Հանանք մեզի Համար ապակով ուրիշ երիտասարդ եկեղեցական մը: Այդ բնկու Համար Թուական շենք կրնար նշանակել. Բայց մեր ամէն կարելին ի գործ պիտի դնենք մեզի Համար: Մինչ այդ մեր ըրած կարգադրութեամբ մեր եկեղեցին ամէն կիրակի բաց պիտի մտայ իսկ Ցիրացու Կարպետ Գարգետեան, որ մեր լուսարարն ունեցին մէկն է. զպրոցներու զերարեքեալ գործերուն ընթացք պիտի տայ:

Հիայտ ըլլալով որ կը դիտակցիք մեր Առաջնորդի պատրութեանց եւ առանց ունելորդ մեկնարարութեանց կը նպաստենք ձեր կարգադրութիւնը. Կօրնենք զմեզ ի բալուր սրտի եւ ամենորդ կը մալթենք արեւշտութիւն եւ բարօրութիւն:

Մամբ սիրոյ ոգևուծի  
Ազօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐԱՆԳԻՍԱՊՈՍ  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

Գ Ա Տ Ճ Ե Ն

Թիւ 1779  
Ապրիլ 29, 1957

Պատուարժան  
Մխական Խորհուրդ  
Արքեպիսկոպոս Եկեղեցւոյ  
Լովել.

Ազնիւ սիրելիք մեր,

Թուականէս երկու օր առաջ ի դիմաց պատուարժան Մխական Խորհուրդիդ Պրն. Յակոբ Կիրակոսեան եւ համայնքիդ Երեսփոխան Պրն. Կարապետ Պարպատեան հեռաձայնով մեզի ներկայացուցին եկեղեցւոյդ տղանօրէն մարմիններու խառն ժողովի դիտողութիւնը ի մասին ծուխիդ հովիւ Արժանաշնորհ Տ. Կարէն ԲՏՆՅ. Կտանեանն այլուր փոխադրութեան:

Հեռաձայնի վրայ մենք պէտք եղած լուսարանութիւնները տուինք Ձեր երկու պատուական պաշտօնեաներուն Տէր Կարէնի այլուր փոխադրութեան կապակցութեամբ: Այսու կուզենք Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն դժուարին կացութեան որուն ենթարկուած է Ձեր Առաջնորդը թեմի հոգեւորականութեան պակասին պատճառաւ: Ունինք խոշոր համայնքներ որոնք մնացած են անհովիւ եւ իբր Առաջնորդ ստիպուած ենք ընել փոփոխութիւններ. նոյն իսկ երբեմն մէկ հովիւի յանձնելով երկու համայնք որպէսզի մեր ժողովուրդը անխիթար չմնայ:

Սոյն փոփոխութիւնը կատարելով երբեք չի նշանակեր որ մենք կանտեսենք Ձեր համայնքը: Կրնաք վստահ ըլլալ որ ըստ կարելու այն պիտի ջանանք Ձեզի համար ապահովել ուրիշ քրիստոսարդ եկեղեցական մը: Այդ ընելու համար թուական չենք կրնաք նշանակել, բայց մեր կարելին է գործ պիտի դնենք Ձեզի համար: Մինչ այդ մեր ըրած կարգադրութեամբ Ձեր եկեղեցին ամէն կիրակի բաց պիտի մնայ: Իսկ Տիրացու Կարապետ Փափազեան, որ մեր լաւագոյն ուժերէն մէկն է, դպրոցներու վերաբերեալ գործերուն ընթացք պիտի տայ:

Լիայոյս ըլլալով որ կը գիտակցիք Ձեր Առաջնորդի դժուարութեանց եւ առանց աւելորդ մեկնաբանութեանց կընդունիք եղած կարգադրութիւնը, կօրհնենք զՁեզ ի բոլոր սրտէ եւ ամենքիդ կը մաղթենք արեւշատութիւն եւ բարօրութիւն:

Մնամք սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՄԱՍՏՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Քիւ 1943  
Մարտ 1, 1961

Արժանաշնորհ  
Տ. Գալուստ ԶԿՆՅ. Մասթլուսան  
Հոգևոր Հովիւ եւ Լախազահ Միական Խորհուրդի  
Արքայ Կարգանաց Նկեղեցւոյ  
Լոզիլ.

Սրբիւ Տէր Հայր.

Սաացան ենք 1961, Փետրուար 24 թուակիր Ձեր նամակը, որով կը  
հաղորդէ թէ Ձեր Լախազահութեամբ՝ Փետրուար 19ին զուամարում Միական  
ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկա-  
յայնելով ջուկարհութեան արգիւնքը, կը խնդրէ ընտրում աններում վա-  
ւերացման պաշտօնազիրք:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը անդի ունեցան է թմ-  
ճական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրում անները,  
իրրեւ Նկեղեցւոյ Նախանձախնդիր ու Նուիրեալ անդամներ, կը վայելեն  
Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք ա-  
նոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարք՝ Գրիգոր Գրիգորեան  
Մինաս Գոզոսեան  
Ասատուր Ամպայեան  
Հայկ Կուստուրեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատուար-  
ժան Միական Խորհուրդի յաջող եւ արգիւնաւոր գործունեութիւն, ի վաս  
Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ս. Նկեղեցւոյ ու ի շինութիւն համայնքի  
Ձեր սրբեցեալ ժողովուրդին:

Մեանց Տիրուանդ սիրոյ ողջունի  
Ազօթաբար

ՍՐՈՆ ԱՐՄԵՆԻԱԿԱՐՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1944  
Մարտ 1, 1961

Արժանաշնորհ  
Տ. Գալուստ ԲՆՅ. Մտաթէսեան  
Հոգեւոր Հոգիւ Արքեպ Վարդանանց Եկեղեցւոյ  
Լոյսի.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Արքեպան Հայրը Մարտ 1 Թուակիր պաշտօնագրով մը  
վաւերացուց Զեր Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը:

Հրահանգուած ենք Զեզի յայտնել թէ անհրաժեշտ է որ Առաջ-  
նորդարան զրկէք Զեր Միական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը առաջին  
պատահութեամբ՝ որպէս զի ներկայացնենք Թեմական Խորհուրդին:

Թէեւ ասկէ առաջ Զեզի զրկած էինք տեղեկագիրին համար հար-  
ցարանը, բայց այսու կը ներփակենք ուրիշ օրինակ մը Զեր զիւրութեան  
համար, խնդրելով որ փութով զայն լեցնէք եւ վերագործնէք Առաջնոր-  
դարան:

Մեամ խորին յարգանքով

Սուրեն Մանուէլեան  
Դիւանագետ

Թիւ 11324

Յուլիս 17, 1964

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր ԹՀՆԵՂԱՅՐԱԿԱՆԻ  
Հագեւոր Հովիւ Լովէլի, Մէսս.

Սիրելի Տէր Գրիգոր,

Ինչպէս հեռախօսով հաղորդած էի Ձեզի, այսու կը հաստատեմ թէ  
Յուլիս 26-ի կիրակին պիտի այցելեմ Լովէլի մեր հօտին եւ այդ  
առթիւ պիտի կատարեմ դպրութեան ձեռնադրութիւնս:

Ձեր նամակին մէջ կարգ մը խնդրանքներ ըրած էիք, սարկաւազի  
ձեռնադրութեան համար: Նախ պէտք է ըսել թէ սարկաւազի ձեռ-  
նադրութեան մասին մենք շատ զգոյշ ենք, եւ բացառիկ պարագա-  
ներու միայն Աւագ Սարկաւազ կը ձեռնադրենք, եւ այն ալ մեծ  
եկեղեցիներուն համար: Հեռեւորքը, խօսքը կիսասարկաւազի  
ձեռնադրութեան մասին պէտք է ըլլայ, եւ Ձեր եկեղեցւոյ պարա-  
զային, Արամ Ստեփանեան միայն յարմար կը նկատենք կիսասարկա-  
ւազի ձեռնադրութեանս:

Իսկ Ձեր պատրաստած վեց տղաքը, նախ պէտք է դպրութեան չորս  
աստիճանները ստանան, եւ ապազային միայն Ուրարի Օրհնութիւն  
ընդունին, երբ աւելի վարժ ըլլան:

Վստահ ենք թէ հարկ եղածը կը կարգադրէք: Մեր փախարն է որ  
այդ կիրակին դուք պատարագէք եւ մենք ձեռնադրութիւն կատարենք  
ու քարոզենք:

Տիրուանդ սիրոյ ողջունելու  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՂԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

ST. VARTANANTZ  
ARMENIAN CHURCH

60 Lawrence Street  
Lowell, Mass.

Tel. GLenview 2-1290



ՍՐԲՈՑ ՎԱՐԳԱՆԱՆՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ

Լովել, Մեա.

Հովիւ  
ԳՐԻԳՈՐ ՔԷՆՑ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ  
Rev. Fr. Krikor Hairabedian  
Pastor  
Tel. GLenview 3-4247

Գերաշնորհ,  
Տ. Սիոն Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկահայոց.  
ի Նիւ Եորք.

Սրբազան հայր,

քանի մը օրեր առաջ հեռաձայնային խօսակցութեան ընթացքին Յուլիս 26 — ի կիրակին նշանակեցիք եկեղեցւոյս մէջ կատարուելիք ձեռնադրութեան համար, մեզի համար շատ յարմար կիրակի է: Պիտի ուզէի կարգ տեղեկու թիւններ տալ ձեռնադրեալներու մասին ու սպասել ձեր վերջնական որոշման կամ հրահանգին առ այդ, որպէսզի կարենամ հրապարակել անոնց անունները, տրուելիք աստիճանները:

Սրբազան հայր, անշուշտ կը ճանչնաք Մերկեր Ասրկաւազ Ահարոնեանը, այժմ շատ անկանոն կու գայ եկեղեցի որովհետեւ տարիքը առած է ու Քիզի քապէս անհանգիստ, թէեւ տակաւին իր լաւագոյնը կը փորձէ եկեղեցիիս համար: Ունինք Կիսասարկաւազ Մովսէս Մլգիկեանը, որ երկար տարիներ ծառայած է եկեղեցւոյս: Տիրացու Մովսէսին տիկինը բողոքական եկեղեցի կ'երթայ, ու այժմ ալ, Տիրացուին տիկինը իր երկու զաւակներն ալ հետը կը տանի հակառակ ամուսնոյն բոլորն ընդիմութեան: Ոմանք կը մեղադրեն Տիրացուն, սակայն ես եղայ իրենց ընտանիքէն ներս ու երկարօրէն թեստեցանք, Տիրացուն յանցանք չունի այս ինդրոյն մէջ, եւ նկարագիր մըն է որ մինչեւ մահ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ պիտի մնայ, ու թերեւս օր մը իր միջոցաւ եւս զաւակները վերադառնան եկեղեցի: Իմ մտքիս մէջ Տիրացուն մէկն էր Աւազ Ասրկաւազութեան երկու թեկնածուներէն, Լովրլցի է ու Մերկեր Ասրկաւազին բացակայութեան միայն ինք է որ կը հասնի մեզի: Ձերդ Սրբազնութեան նկատառութեան կը յանձնեմ իր Աւազ Ասրկաւազ ձեռնադրուելու պարագան:



ST. VARTANANTZ  
ARMENIAN CHURCH

60 Lawrence Street  
Lowell, Mass.

Tel. GLenview 2-1290



ՍՐԲՈՑ ՎԱՐԳՈՒՆԱՆՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Լօվել, Մեւ.

Հովիւ  
ԳՐԻԳՈՐ ՔԷՆՑ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ  
Rev. Fr. Krikor Hairabedian  
Pastor  
Tel. GLenview 3-4247

Երկրորդ թեկնածուն Աւագ Սարկաւազութեան, Արամ Ստեփանեանն է, որ աւելի քան երկու տարիներէ ի վեր խորանէն կ'երգէ: Անցեալ տարի Ս.Ներսէս Աստուածաբանական ճեմարան պիտի մտնէր, ընտանեկան կարգ մը դժուարութիւններու պատճառաւ չկրցաւ: Հաւանաբար յառաջիկային համար պատրաստ անձ մըն Քահանայական կոչում ստանալու համար: Հարցարան մը տուած էիք, սերտեց բոլորը: Պէյրոութեն ներս Երեք տարուան աստուածաբանական դասընթացք մըն ալ աւարտեց, ամէն կերպով պատրաստ ու օգտակար անձ մըն է: Իր ձեռնադրութեան պարզան եւս ձեր նկատողութեան կը յանձնեմ: Որով Տիրացու Մովսէս Մլգիկեան ու Արամ ստեփանեան Աւագ Սարկաւազութեան թեկնածուներ են: Արամ Ստեփանեանի քահանայական կոչում ստանալէ ետք, Տիրացու Մովսէսը կ'ունենամ իրրեւ մնայուն Սպասաւոր Ս.Խորանի:

Սրբազան հայր, տարիէ մը ի վեր կրգբաղիմ վեց պատանիներով, կը սորվեցնեմ անոնց կիսասարկաւազութեան պաշտօնները: Շատ հաւատարիմ պատանիներ են որոնք եկեղեցիէն ներս թէ դուրս ինձի կ'օգնեն յամենայն հաւատարմութեամբ եւ անկեղծութեամբ: Անշուշտ Լովըլ ծնած պատանիներ են: Ես իմ լաւագոյնս փորձած եմ ու կը շարունակեմ ի գործ դնել որպէսցի անոնք եկեղեցւոյս ուրարակիրները դառնան ու ապագային ալ անոնցմէ Աւագ Սարկաւագ ունենայ եկեղեցիս: Վեցը միասին սկսան տարի մը առաջ վերոյիշեալ պաշտօնին պատրաստուելու համար ու ինձի համար շատ դժուար պիտի ըլլայ բաժնել զիրենք: Սոյն պարզան եւս Ձերդ Սրբազնութեան նկատողութեան կը յանձնեմ:

Իսկ խումբ մըն ալ փոքրիկներ դպիր պիտի ձեռնադրուին ու դպրուհիներու քօղերը պիտի օրհնուին :

Եթէ կարելի ըլլայ շուտով իմանալ Ձերդ Սրբազնութեան Որոշումը վերոյիշեալ ձեռնադրութեանց նկատմամբ, կրնամ յայտարարութեանց սկսիլ ու պարաստուիլ այդ օրուան:

Որդիաբար կը համբուրեմ Ձերդ Ս.Աջը  
*Գրիգոր Քէյ. Հայրապետեան*  
Գրիգոր Քէյ. Հայրապետեան

Յունիս 4, 1964

Թիւ 11612  
Նոյեմբեր 11, 1964

Մեծայարգ  
Տիար Յակոբ Պարպատեան  
Ատենապետ Միսական Խորհուրդի  
Հովիւ,

Սիրելի Պրն. Պարպատեան,

Ինչպէս հեռախօսով Ձեզի յայտնած էինք, այսու, պաշտօնապէս  
Ձեզի կը հաղորդենք թէ՛ նկատի առնելով Ձեր հոգեւոր հովիւ Տ. Գրի-  
գոր Զհնյ. Հայրապետեանի խնդրանքը, որոշած ենք հովուական փոփո-  
խութիւն կատարել եւ Ձեր եկեղեցւոյ հովիւ կը նշանկենք Ս. Միլիկոսի  
հովիւ Աթ. Տ. Կիւրեղ Զհնյ. Գայեայեան, որ իր նոր պաշտօնին պիտի  
ստանձնէ նոր տարիէն վերջ:

Կը յանձնարարենք որ հաղորդակցութեան մէջ մտնէք Տէր Կիւրե-  
ղին հետ՝ իր ժամանման թուականի մասին:

Կը յուսանայ թէ ամէն դիւրութիւն եւ օժանդակութիւն կ'ընծա-  
յէք Ձեր նոր հովիւին՝ որպէսզի անիկա կարենայ իր ամբողջ ուժերը  
տրամադրել Ձեր ծուխի հոգեւոր ու եկեղեցական պէտքերուն, օգտակար  
ծաղայութիւն մատուցանելու համար տեղւոյդ մեր բարեպաշտ ժողովուր-  
դին:

Մաղթելով Ձեզի յաջողութիւն եւ Աստուծոյ օրհնութիւնները՝

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ  
Աղօթաբար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Թիւ 11613  
Նոյեմբեր 11, 1964

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՆՆՅ. Տալեայեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Ս. Միլվոքի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Նկատի առնելով Ձեր եւ Ս. Միլվոքիի Միական Խորհուրդի խըն-  
դրանքը Հովուական փոփոխութիւն կատարելու, ուրախ ենք հաղորդելու  
Քիզորդելու Ձեզի թէ՛ կարգադրած ենք որ դուք տեղափոխուիք Հովել եւ  
ստանձնէք տեղւոյն Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ Հովուական պաշտօնը:

Այսու, զՁեզ կը նշանակենք Հովիւ Հովելի Սրբոց Վարդանանց ե-  
կեղեցւոյ: Այս մասին գրած ենք Հովելի Հովիւին ու Միական Խորհուր-  
դին: Հովուական այս փոփոխութիւնը տեղի պիտի ունենայ նոր տարիէն  
վերջ:

Կը յանձնարարենք Ձեզի որ հաղորդակցիք Հովելի Միական Խոր-  
հուրդին եւ Հովիւին հետ տեղափոխութեան թուականի մասին:

Կը յուսանք թէ Ս. Միլվոքիի մէջ ունեցած Ձեր փորձառութիւնը  
օգտակար պիտի ըլլայ Ձեր ապագայ Հովուական պաշտօնի բարեւոք կատար-  
ման համար:

Մաղթելով Ձեզի իմաստութիւն, կարողութիւն եւ յաջողութիւն:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Թիւ 11611  
Նոյեմբեր 11, 1964

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր ԶԿՅ. Հայրապետեան  
Հոգեւոր Հովիւ Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ  
Հովիւ.

Սիրելի Տէր Գրիգոր,

Նկատի ունենալով տեղափոխութեան Ձեր խնդրանքը, այսու, Ձեզի  
կը հաղորդենք թէ՛ զՁեզ Հովիւ կը նշանակենք Ս. Միլվոքիի Ս. Յարու-  
թիւն Եկեղեցւոյ: Ձեր տեղ պաշտօնի կոչուած է Տ. Կիւրեղ ԶԿՅ. Գալ-  
Յայեան:

Հովուական այս փոփոխութիւնը պիտի կատարուի նոր տարիէն վերջ:

Այսու, կը յանձնարարենք որ յարաբերութեան մէջ մտնէք Ս. Միլ-  
վոքիի Հովիւին ու Մխական Խորհուրդին հետ՝ Ձեր տեղափոխութեան թուա-  
կանի մասին:

Յոյս մեծ ունինք թէ Հովիւի մէջ ունեցած Ձեր փորձառութիւնը  
օգտակար պիտի ըլլայ Ձեր Հովուական նոր պաշտօնավարութեան զաշտին  
մէջ:

Սիրելի Տէր Գրիգոր, Ձեզի կը մաղթենք իմաստութիւն, Աստուծոյ  
օգնականութիւնը եւ յաջողութիւն Ձեր Հոգեւոր ու նուիրական ծառայու-  
թեան մէջ:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Թիւ 11614  
Նոյեմբեր 11, 1964

Մեծայարգ  
Տիար Արմանտ Պէնտեան  
Ատենապետ Միական Խորհուրդի  
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Ս. Միլվոքի.

Սիրելի Պրն. Պէնտեան,

Անցեալ Մայիսին, Ս. Միլվոքի մեր այցելութեան առթիւ՝ Ձեր ըրած խնդրանքը՝ հովուական փոփոխութիւն կատարելու Ձեր համայնքին համար՝ նկատի առած ենք, եւ ուրախ ենք Ձեզի հաղորդելու թէ՛ յարմար կարգադրութիւն ըրած ենք Ձեզի համար հովիւ նշանակելով Լովելի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գրիգոր Քհնյ. Հայրապետեան:

Հովուական այս փոփոխութիւնը պիտի կատարուի նոր տարիէն վերջ:

Այսու կը թելադրենք որ յարաբերութեան մէջ մտնէք Տէր Գրիգորին հետ, իր ժամանման թուականի մասին:

Կը յուսանք թէ պատշաճ ընդունելութիւնը կ'ընէք իրեն՝ ապա-հովելով բնակարան եւ ամէն օժանդակութիւն ընծայելով իրեն՝ որպէսզի կարենայ օգտակար ըլլալ Ձեր համայնքին ու հովուել Ս. Միլվոքիի մեր բարեպաշտ ժողովուրդը:

Մաղթելով Ձեզի իմաստութիւն եւ յաջողութիւն,

Մնամք հաճրական սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

*Այսպիսով*

Գերաշնորհ,  
Տ. Սիրոն Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հիւս. Ամերիկահայոց.  
ի նիւ եորք.

ՆՈՅՆՄԱՐԵՐ 19, 1964

Արքագան Հայր,

Ստացայ նոյեմբեր 11, 1964 թուակիր նամակը որով կը յայտնէիք ինձ թէ Սառլթ Միլվորքիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ հովիւ նշանակուած եմ ու իմ տեղս պաշտօնի կոչուած է Արժ. Տ. Կիւրեղ Բրն. Գալֆայեան:

Կը մէջբերեմ ձեզի դրկած նամակէս, Հոկտ. 19, 1964 թուակիր, պարբերու թիւն մը որ կը կազմէր նամակիս կորիզը. " Կը փափաքիմ փոխադրուիլ Լո վըրէն ոչ թէ գիրենք արհամարհած ըլլալու համար եւ կամ թէ աւելի հանգիստ ու ապահով տեղ ունենալու համար, հապա ժամանակս ու ծառայութիւնս աւելի հիմնական ու արդիւնաւոր դարձնելու համար " : Դրկած նամակիս վերջին տողն ալ կը մէջբերեմ. " Նկատի առնուելիք կարգ մը կէտեր կան զորս ձեր ուշադրութեան պիտի յանձնէի Ձեզ լսելէ ետք " :

Այս նամակիս իբրեւ պատասխան երեք շաբաթներ ետք ստացայ վերոյիշեալ նոյեմբեր 11, 1964 թուակիր Ձերդ նամակը որով կը յայտնէք թէ արդէն իսկ նշանակուած եմ Ս. Յարութիւն եկեղեցւոյ հովիւ: Կը յանձնարարէք ինձի, վստահ եմ Տէր Կիւրեղին, որ հաղորդակցութեան մէջ մտնենք կամ մտնեմ երթալիք եկեղեցւոյս հոգաբարձութեան եւ հովիւին հետ կարգադրելու համար փոխադրութեան թուականը: Երկու օրեր առաջ մեր հոգաբարձական ժողովին մէջ կարդացուեցաւ Ձերդ սրբազնութեան հոգաբարձութեան Առենապետին ուղարկուած նամակը, եւ նամակին ընթերցումէն ետք Պրն. Յակոբ Պարպատեան Տիար Առենապետը, հանդիսաւոր կերպով, յայտարարելէ ետք, նոյեմբեր 4 - ին իրեն հետ 45 վայրկեանի հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցած էք, կ'ուզեմ հոս շեշտել սա պարագան թէ մինչ այդ ես կը սպասէի նամակիս պատասխանին որ չէի ստացած ու նոյնիսկ չէի ստացած ձեզմէ հեռաձայնի վրայ խօսած ըլլալու պատիւը, ուրեմն Պրն Պարպատեան բացատրութիւններ տուաւ վերոյիշեալ հեռաձայնային խօսակցութեան նիւթին մասին ու նաեւ տուաւ իր հեղինակաւոր ժխտական զաղափարը թէ " ասկէ ետք շատ զգոյշ եւ արթուն պիտի ըլլանք մեր ընտրելիք բահնայի մասին, պէտք է գիտնանք թէ որքան հայերէն, Անգլիերէն գիտէ եւայլն " : Անշուշտ պատկերը ինչ որ է հոս նոյնն է նաեւ Սառլթ Միլվորքին մէջ:

" Մեր ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊՕՍԵՐԸ " վստահաբար Հայ եկեղեցականը, ըսենք իրենց հովիւները " Մէյլըզմէններու " տեղ են դրած, կ'ուզեն չափել, կը ընել հասակը, ծանրութիւնը, գեղեցկութիւնը, Հայերէնը, Անգլիերէնը իրենց գիտցած ու չգիտցած հայերենով ու Անգլիերէնով: Անշուշտ պատուական հոգաբարձուներ կան որոնք կրկին պատուի արժանի պիտք են դառնալ, սակայն ընդհանուր պատկերը սա է թէ հոգաբարձութիւններ ու երբեմն չակերտաւոր հոգաբարձուներ, եկեղեցականները գործաւորներու տեղ են դրած ու անոնց հետ կը վարուին առ այդ: Իմ ծանցած եկեղեցականներուս տալէն իննը կը տառապին ու իրենց բոլոր ժամանակը, կորովը գիտութիւնը, իրենց կոչումն ու պատրաստութիւնը, փոխանակ Աստուծոյ ու ՄԱՐԹՈՒ ԱԶԳԱՅԻՆ գործին մէջ ղնելու, կը վատնուին իրենց դէմ բացուած տխուր, կոյր անիմաստ, անձնակեղրոն ու երբեմն զգուշի ըլլալու աստիճան փառասիրական պայքարի մէջ, որմէ եկեղեցականներ կը յոգնին, կը տառապին, սրտի կաթուածներ կ'ունենան ու արեան բարձրացումներ, կը զգուշին ու կը մտածեն տեղափոխութեան մասին, ինչ որ լուծում մը չէ չարիքին, շատ անգամ վարձատրութիւն մը Բրիտանոնէական առ առումով կոյր, ու Ազգային առումով անհարազատ ու ժխտական Հայասիրութեամբ ու հայրենասիրութեամբ գինովցած ժխտական հոգաբարձուներու, մասնաւորաբար

Ատենապետ ըլլալու հիւանդութենէն տարուած Ատենապետներու:

Արտիս մէջ քաղցր յիշատակը պիտի պահեմ մինչեւ մահս, այն ազնիւ ու պատուական Հոգաբարձուներուն ու Ատենապետի մը, որոնք իրենց ուսերուն վ վրայ դրուած պաշտօնները հերոսական ազնուութեամբ ու հայ մարդու հարգատ սիրով լեցուած ինծի<sup>ն</sup> եղբայրաբար գործեցին ~~իստի~~ ~~ի~~ պայծառութիւն Հայց. Եկեղեցւոյ եւ յօգուտ Հայ ժողովուրդին, ու մինչեւ մահս պիտի չմոռնամ ու չդադրիմ աղօթելէ անոնց համար, որոնք հոգաբարձու եթէ Ատենապետ, իրենց վստահուած պաշտօնները օգտագործեցին դարձնելու համար եկեղեցականները, ենթակայ գործաւորներ, ու եկեղեցիները վերածելու ԱՍՏՈՒԾՅՈՒՆ ՍՈՒՐՔ ՏՈՒՆԷՆ հասարակ գլխակներու, որոնցմէ ներս կը մտնեն սիկանները կուրծքերուն շա րած, ձեռքերնին գրպաններուն մէջ ու երբեք չեն զիջանիր խաչ ալ հանել, որովհետեւ ՄԵԾ ՄԱՐԻԿ ԵՆ ու Ազգը իզիրենք ընտրել է կարծէք հովիւներու եւ գաղութներու կեանքը խանգարելու համար:

Այսօր մեր եկեղեցիներէն ներս Աստուծոյ ու Յիսուսի Սէրը կը պակսի ու մեր ժողովուրդէն ներս կը պակսի Սէր՝ հայուն, մէկ այլ հայուն հա ղէպ:

Ըսելիք առաջ իմ վերջին խօսքս պիտի ուզէի ամփոփել սակայն իրական պատկերը տալ իմ Լովրլ չկարենալ մնալուս, իբրեւ հովիւ:

1956 — ին Ս. Վարդանանց եկեղեցին հրատարակած է գրքոյկ մը եկեղեցւոյս Քառասնամեակի տօնակատարութեան առիթով եւ անոր մէջ կը կարդանք Հետեւեալը՝ 1925 — ին Հայկական դպրոցը ունեցած է 75 աշակերտներ: 1935 — ին 55 աշակերտներ եւ 1942 — ին 27 աշակերտներ: 1948 — ին 30 աշակերտներ ունէինք իսկ 1955 — ին Հայ դպրոցի եկեղեցիներուն թիւն էր 16:՝ էջ 61: Որով Հայ դպրոցի աշակերտներուն թիւն իր եղած 75...55...27... 30...16: իսկ երբ ես ստանձնեցի աշակերտներուն թիւը 10 էր:

Արքազան հայր անցնող տարուան իմ տեղեկագիրս ու հոգաբարձութեան տեղեկագիրը ցոյց կուտայ թէ ես ունեցայ դպրոցէս ներս 50 աշակերտներ: Ունեցայ 10 աշակերտներ Գիշերայինէն ներս իսկ 7 աշակերտ նաշուայէն ներս: Ընդամենը 67 աշակերտներ, ու ես վճարում չեմ ստացած վերոյիշեալ դպրոցնե րէ ներս տարած աշխատանքիս համար, իմ վարձատրութիւնը եղած անոնց մայրե նի լեզուով երգերը, Արտասանութիւնները ու խօսքերը: իսկ ասոր փոխարէն, որովհետեւ քանի մը աշակերտներ կողման եղեր անբաղձալի ընտանիքներէ, սեւ ու կոյր պայքար մը շղթայագերծուեցաւ իմ դէմ ու դպրոցիս դէմ, կարելի է ըսել միայն մէկ անձէ սկսած յանձին Պրն. Պարպատեանի, Ատենապետ հոգաբար ձութեան, ու ժողովուրդէն երկու հոգիներ միացան վերոյիշեալ շղթայագերծ ման իրենց սուտերով, բամբասանքներով: Ու այդ բոլորին արդիւնքը՝ այս տա րի միայն 10 աշակերտներ կու գան ու՝ ամենայ ծիծաղելին զիս կը ներկայա ցրնէ անբաղձալի կուսակցական: Ահաւասիկ Հայասիրութիւնն ու Հայրենասիրու թիւնը մարդոց:

Անբողջ տարի մը եկեղեցիիս կեանքը սքանչելի էր, եւ յայտնապէ եկե ղեցի յաճախողներուն թիւը կրկնապատկուած էր, Պօլինկի խումբ կազմած էինք, եզգախումբ ունեցանք, Վարդանանց Տօնակատարութիւն ինչպէս նաեւ Ապրիլ 24 ի որ միշտ Լօրէնսի մէջ էր կատարուած, ունեցանք անցեալ տարի, սակայն քանի որ կրկին վերոյիշեալ անձին չափին ու կշիռին չյարմարեցայ, ենթարկուեցայ չարախօսութեան, եղայ կրկին կուսակցական, Սահմանադրութեան հակառակ գոր ծող, Տիքթէյթըր եւայլն: Ու ձեւով մը եկեղեցական կեանքս ալ խանգարուե ցաւ: Ահաւասիկ հոս ալ եկեղեցասիրութիւնը մարդոց:

Իմ Լովրլի Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ հովիւ նշանակուեցէս ասդին անցեր են քսան ամիսներ: Ես երբէք ոչ մէկ ատեն չեմ ըննադատած ոեւէ հո գաբարձու կամ եկեղեցւոյս հոգաբարձութիւնը իր կատարած ոեւէ աշխատանքին համար: Նիւթական, շինարարական գործառնութեանց մէջ, մանուկի մը պէս մտիկ եմ ըրած ժողովներու ընթացքին, որովհետեւ ունեցած եմ իրենց նկատմամբ սէր, յարգանք ու վստահութիւն: Երբէք հոգաբարձութիւնը ու ես վէճ ու տա րակարծութիւն չենք ունեցած, միայն ատենապետն է որ ինծի դէմ ամբաստա

նուրթիւններ է բրած ու գործածած ամէն անպարկեշտ միջոց ու ճամբայ, զիս  
ու իմ կատարած գործերս նսեմացնելու ու խանգարելու համար, ու այդ զի  
նովուրթեան մէջ խանգարած Հայկական Դպրոցը, խանգարեց Տիրացու Արամ Ստեփան  
եանին Կիսասարկաւագ ծեռնադրուելու կարելիութիւնը, ու Գաղութիս եկեղեցւ  
կան կեանքը: Կը հաւատամ որ Մեր յարգելի Ասեմապետը երբէք չէ հասկցած  
եկեղեցիին ինչ ըլլալը, չէ ունեցած հաւատք Աստուծոյ հանդէպ ու յարգանք  
Հայ Քահանայի հանդէպ: Ու այս բոլորին համար ան երբէք չէ յանդիմանուած,  
ընդհակառակը երբեմն վարձատրուած ալ է բարոյապէս ...: Անշուշտ ան ունէր  
իր նման մտածողներ, որոնք իրենց կարգին օգնեցին իրեն սուտերով եւ բամ  
բասանքներով, վերջերս ստուգեցի թէ նոյն անձերը որոնք երբեմն մուրթի մէջ  
երբեմն թելեֆօններու ետին ծուլարած, ինձմէ առաջ գտնուող քահանաներուն  
օրով եկեղեցադուլ ալ հռչակած են...: Ահա ասոնք են Գաղութիս կարեւոր  
ԴԵՄՔԵՐՆԸ ու ԴԵՊՔԵՐԸ որոնցմէ յոգնած է հովիւը ու անմեղ հաւատացեալ ու  
խաղաղասէր ժողովուրդը:

Արքայան հայր, նկատելով որ իմ տուած պատկերը առաւել կամ նուազ  
չափով նոյնն է բոլոր մեր եկեղեցիներուն մէջ, որովհետեւ եկեղեցւոյ  
քրիստոնէական Առաքելական ուղղութիւնը չէ մնացած հապա եկեղեցիէն ներս  
տեսնուածը սխալ հասկցուած ազատամտութիւնն է, սխալ հասկցուած քրիս  
տոնէութիւնն է, ու սխալ համկցուած ազգայնականութիւնն է, ու փոխանակ  
Քրիստոնէական անուշ, խաղաղ ու առողջ Ազգային հարազատ կեանքի մը, ինա  
միականացած, աշխարհականացած ու հատուածականացած քինախնդիր, հայատեաց  
ու ոչ քրիստոնէական ու Աստուածաշնչական ճամբու մը մէջ դրուած է եկե  
ղեցին: Եարունակելով

Նկատելով որ եկեղեցականին հեղինակութիւնը, իշխանութիւնը ու Աս  
տուծոյ ծառայի արժանապատուութիւնն ու կոչումը ոչ միայն անտեսուած է  
հապա նաեւ օրինականացած է անոր ենթակայութիւնը իրենց անուաններն ճիշդ  
հեզել չգիտցող ու իրենց կեանքին մէջ Մուրթ Գիրք չկարդացող հոգաբարձունե  
րու ու Հոգիով ու մտքով հիւանդ Ասեմապետներու, բացառութիւնները միշդ  
ու միշդ յարգելով, նկատելով որ իմ ծանչցած քահանաներուս տասէն իննը  
հիւանդ են դարձած վերոյիշեալ պատճառներով, նկատելով որ քահանաներ կան  
որոնք կը միսիթարուին ըսելով թէ տասը տարիս մնաց, ու թը տարիս մնաց, որով  
հետեւ յուսահատած են վերոյիշեալ պատճառներով ու իրենց թանկագին ժամա  
նակը կը վատնեն ատելավառ ու անտեսիլ գործակիցներու պատճառաւ, ես կու  
զամ յայտարարելու թէ որոշած եմ թողուլ ներկայ եկեղեցիս ոչ թէ երթալու  
համար Սառութ Միլվոգի վերոյիշեալ պայմաններու եւ միտուորտին մէջ, ինչ  
որ ալ էւս այդ բոլորը չեն ուղիղ համեմատեր իմ Քահանայական, Առաքելական  
ու Քրիստոնէական համոզումներուս ու հաւատքիս, պահելով հանդերձ Ծնորհա  
լիներու նարեկացիներու, Լուսաւորիչներու ու յայտնի ու անյայտ պարկեշտ  
հայորդիներու լոյս հաւատքը ու Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկե  
ղեցւոյ զաղափարական տեսիլը ու սէրը սրտիս ու մտքիս մէջ, արցունքով ու  
ցաւ իսիրտ եւ սակայն համոզումով ու կամովին կուզամ ըսել թէ որոշած եմ  
դուրս գալ մէկ անգամ ընդ միշտ Հայաստանեայց եկեղեցւոյ նորօրինակ ծա  
ռայութեան դաշտէն ու յանձնելու իմ կեանքս ու ծառայութիւնս Աստուծոյ  
խղճիս ու կոչումիս ճամբով առաջնորդած դաշտէն ներս, ուր Աստուծոյ պաշ  
տօնեան իսկական առաջնորդն եւ ուղեցոյցն է եկեղեցւոյ ժողովուրդին, եւ  
ուր Քրիստոնէական Սկզբունքները ի պատուի են, ու ամէն հաշիւէ առաջ,  
Աստուած կու գայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, եւ ուր Մէրն ու  
խաղաղութիւնը կը թագաւորեն մարդոց սրտերուն մէջ:

Արքայան հայր, կը պատուեմ ձեր անձնաւորութիւնը ու հեղինակութիւնը:  
Կը մնամ պաշտօնիս վրայ ժամանակ մը, ոչ շատ երկար, որպէսզի մէկը իմ հանգստով  
հովէք: Իսկ եթէ փափաքիք որ շուտով թողում պաշտօնս պիտի ննդրէի ձերդ Արք  
բազնութենէն երկու շաբաթ առաջ իմացնել ինձի որ գէթ մարդկային հասարա  
կական իրաւունք մը տուած ըլլաք ինձի:

Իմ մէջ փորձեցէք տեսնել բազմաթիւ հովիւներու բողոքը, ցաւը, տեսիլը  
ու լսել՝ 2035Ը:

Կը համբուրեմ Ձերդ Ս. Աբր  
*Գրիգոր Բնյ. Գաղափարեան*  
Գրիգոր Բնյ. Հայրապետեան



Թիւ 11981  
Յունիս 11, 1965

Մեծայարգ  
Տիար Նշան Գայանեան  
Ատենապետ Պատուարժան Ծխական Խորհուրդի  
Արքոյ Կարդանանց Եկեղեցւոյ  
Լոյսիլ:

Սիրելի Պրն. Գայանեան,

Ինչպէս տեղեակ էք, Ձեր հոգեւոր հովիւ Արժանաշնորհ Տ. Գրիգոր  
ՔՆՆՅ. Հայրապետեան Մայիս 1 եւ 17, 1965 թուակիր նամակներով ներկա-  
յացուցած է իր հրաժարականը Ձեր ծուխի հովուական պաշտօնէն:

Կը ցաւինք յայտնելու որ հակառակ մեր թելադրութիւններուն, ան  
կը մնայ իր համոզումին վրայ եւ վերջնականապէս կը հրաժարի իր հովուա-  
կան պաշտօնէն:

Տեղի տալով իր խնդրանքին, այսու Ձեզի կը հաղորդենք թէ զինքը  
ազատ կ'արձակենք իր հովուական պաշտօնէն, հաղորդելով իրեն թէ յետ  
այսորիկ իրաւունք պիտի չունենայ մեր թեմի եկեղեցիներուն մէջ քահա-  
նայագործելու եւ քարոզելու մեր ժողովուրդին:

Ձեր եկեղեցւոյ համար հովիւ կը նշանկենք Սաուլ Միլվոքիի հո-  
գեւոր հովիւ Արժանաշնորհ Տ. Կիրիզ ԿՆՅ. Գալճայեանը, որ իր հով-  
ուական պաշտօնը պիտի ստանձնէ Յունիս ամսոյն կէսին տեղափոխուելով Լոյսիլ:

Կը յանձնարարենք որ անհրաժեշտ կարգադրութիւններ ընէք Ձեր նոր  
հովիւի յարմար բնակարան գտնելու եւ ամէն դիւրութիւն ընծայելու իրեն,  
որպէսզի կարենայ իր հովուական պաշտօնը յաջողութեամբ եւ արդիւնաւոր  
կերպով կատարելու, ի միութարութիւն Լոյսիլի մեր բարեպաշտ ժողովրդեան  
եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Ա. Եկեղեցիին:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օրհնութիւնները.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Թիւ 11979  
Յունիս 11, 1965

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր ԲՀՆՅ. Հայրապետեան  
Հոգեւոր Հովիւ Արքեպիսկոպոս Վարդանանց Եկեղեցւոյ  
Հովիւ.

Սիրելի Տէր Գրիգոր,

Ձեր Մայիս 1, 1965, թուակիր հրատարական նամակը ստացած ենք  
ժամանակին, զոր ներկայացուցինք Թեմական Խորհուրդի Մայիս 6ին գու-  
մարուած ժողովին: Թեմական Խորհուրդը, մեզի հետ միասին, ցաւով ըն-  
դունեցաւ Ձեր հրատարականը՝ տեղի տալով Ձեր կրկնակի խնդրանքներուն:

Այսու, պաշտօնապէս զՁեզ ազատ կ'արձակենք Ձեր հովուական պաշ-  
տօնէն, սակայն Ձեր փափաքը նկատի առնելով՝ պարտք կը զգանք մեզի յի-  
շեցնելու թէ մեր թեմի եկեղեցիներու եւ ժողովուրդին մէջ թահաճագոր-  
ծելու եւ քարոզելու իրաւասութիւն պիտի չունենաք:

Ձեր տեղ Հովիւի Հոգեւոր կը նշանակենք Արժանաշնորհ Տ. Կիւրեղ  
ԲՀՆՅ. Գալնատեանը /այժմ Հոգեւոր Հովիւ Սաուլ Միլիպոքի/, որ իր հով-  
ուական նոր պաշտօնը պիտի ստանձնէ Յուլիսի կիսուն, եւ կը յանձնարա-  
րենք որ դուք շարունակէք Ձեր հովուական պաշտօնը մինչեւ իր ժամանու-  
մը եւ պաշտօնի յանձնումը կատարէք մեկնելէ առաջ:

Մաղթելով մեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ իմաստութիւն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Թիւ 11611  
Նոյեմբեր 11, 1964

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր ԶՀԵ. Հայրապետեան  
Հոգեւոր Հովիւ Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ  
Հովիւ.

Սիրելի Տէր Գրիգոր.

Նկատի ունենալով տեղափոխութեան Ձեր խնդրանքը, այսու, Ձեզի  
կը հաղորդենք թէ՛ զՁեզ Հովիւ կը նշանակենք Ս. Միլվոքիի Ս. Յարու-  
թիւն եկեղեցւոյ: Ձեր տեղ պաշտօնի կոչուած է Տ. Կիւրեղ ԶՀՆԵ. Գալ-  
Յայեան:

Հովուական այս փոփոխութիւնը պիտի կատարուի նոր տարիէն վերջ:

Այսու, կը յանձնարարենք որ յարաբերութեան մէջ մտնէք Ս. Միլ-  
վոքիի Հովիւին ու Միական Խորհուրդին հետ՝ Ձեր տեղափոխութեան թուա-  
կանի մասին:

Յոյս մեծ ունինք թէ Հովիւի մէջ ունեցած Ձեր փորձառութիւնը  
օգտակար պիտի ըլլայ Ձեր Հովուական նոր պաշտօնավարութեան դաշտին  
մէջ:

Սիրելի Տէր Գրիգոր, Ձեզի կը մաղթենք իմաստութիւն, Աստուծոյ  
օգնականութիւնը եւ յաջողութիւն Ձեր Հոգեւոր ու Նուիրական ծառայու-  
թեան մէջ:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՐԻՍԿԴՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Գերաշնորհ,  
Տ. Սիոն Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հիւս. Ամերիկահայոց,  
ի նիւ Եորք.

ՀՈԿՏ. 19, 1964

Սրբազան հայր,

Նախանցեալ երեքշաբթի Եղիշէ Վրդ. Կիզիրեանին հետ ունեցած  
հեռաձայնալին խօսակցութեան ընթացքին, հայր սուրբը յայտնեց  
թէ դուք պատրաստակամ էք զիս փոխադրելու եթէ ես հնարաւոր չը  
նկատեմ իմ Լովրլ պաշտօնավարելու:

Կը հաւատամ թէ, այս թեմէն ներս իմ ունեցած առաջին փոր  
ձառութիւնս առաւել պիտի արդիւնաւորուի յառաջիկային իմ ստանձ  
նելիք ծուխէս ներս:

Կը փափաքիմ փոխադրուիլ Լովրլէն ոչ թէ զիրենք արհամարհած  
ըլլալու համար եւ կամ թէ աւելի հանգիստ ու ապահով տեղ ունենա  
լու համար; հապա ժամանակս ու ծառայութիւնս աւելի հիմնական ու  
արդիւնաւոր դարձնելու համար:

Սրբազան հայր կը սպասեմ Ձերդ ցուցմունքներուն:

Նկատի առնուելիք կարգ մը կէտեր կան զորս Ձեր ուշադրու  
թեան պիտի յանձնեմ Ձեզ լսելէ ետք:

Որդիաբար կը համբուրեմ Ձեր Ս. Աջը

ԳՐԻԳՈՐ ՔԶՆՅ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Հովիւ՝ Ս. Վարդանանց Առաք. Եկեղեցւոյ, Լովրլ.

Քիւ 12222  
Դեկտեմբեր 21, 1965

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր ԶԳՆՅ. Հայրապետեան  
Լոպել.

Սիրելի Տէր Գրիգոր,

Ձեր Դեկտեմբեր 14 թուակիր նամակը, որով փափաք կը յայտնէիք վերստին հովուական պաշտօն ստանձնել Մեր Քեմին Մէջ, ներկայացուցիւք Պատուարժան Թեմական Խորհուրդի Դեկտեմբեր 10ի նիստին:

Սյուռ, հաճոյքն ունինք Ձեզի հաղորդելու թէ Թեմական Խորհուրդը որոշեց ընթացք տալ Ձեր խնդրանքին եւ յանձնարարեց որ Ձեզ նշանակենք հոգեւոր հովիւ Մեր Սաուր Սիւվոսիի Ս. Յարութիւն Ծկեղեցիին:

Ձեր հովիւական նոր պաշտօնը պիտի ստանձնէք 1965 Յունուարի վերջաւորութեան: Կը թելադրենք որ յարաբերութեան մէջ մտնէք Սաուր Սիւվոսիի Պատուարժան Թեմական Խորհուրդին հետ, որոնց արդէն հաղորդած ենք Ձեր նշանակումը, Ձեր անդադրութիւնը ժամանակին կատարելու համար:

Հայս հաղորդելով Ձեր սիրելութեան, կը մաղթենք Ձեզի Սաուր ծոյ օգնականութիւնը եւ կատարեալ յաջողութիւն Ձեր հովուական նոր պաշտօնին մէջ:

Ամանորի եւ Ս. ծննդեան տօներու շքեմաօին բարեմաղթանքներով,

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՄՆ ՎՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Կանադայի

Թիմ. Բարսեղյան  
Արթուր

Գերաշնորհ,  
Տ.Սիրոն Արք.Մանուկեան,  
Առաջնորդ Ամերիկահայոց,  
ի նիւ Եորթ

ԴԵՍ. 14, 1965

Սրբազան հայր,

Ձերդ Սրբազնութեան թելադրութեան համաձայն կը գրեմ սոյն նամակը, որով անգամ մը եւս կը յայտնեմ թէ կը փափաքիմ ստանձնել ինչպէս կան պաշտօն որմէ դադրեմ էի քանի մը ամիսներէ ի վեր:

Նկատի ունիմ թէ կացութենէն բան չէ փոխուած: Սակայն եկած եմ այն համոզման թէ Հայց. Եկեղեցին իմ եւս ծառայութեան պէտք ունի, եւ թէ ես անոր միջոցաւ միայն պիտի կարենամ Զրիստոնէական բարձրագոյն զաղափարականը, ինչպէս նաեւ իմ Ազգային արժէքներս տարածել ու հաստատել ժողովուրդիս մէջ:

Նոյն սկզբունքներս ու համոզումներս կը պահեմ: Սակայն զանոնք լաւագոյնս արդիւնաւորելու համար առաւել եւս համբերութեամբ պիտի նուիրուիմ ծառայութեանս մէջ, Աստուծոյ Փառքին ու Եկեղեցւոյս պայծառութեան ի խնդիր:

Կը համբուրեմ Ձերդ Ս.աջը

ԳՐԻԳՈՐ ԲԷՆՅ. ՀԱՅՐԱԳԵՏԵԱՆ

Բարսեղյան. 77 Durant St.  
Lowell, Mass.



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԿՈՄ ԵԳԻՍՎՈԳՈՍ ՄԱՆՈՒԿԱՆ

Աւարձարդ

Bishop Corkom Manougian, Primate

Յունիս 27, 1968

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր Քրնյ. Հայրապետան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Հնյց. Սկեղեցւոյ  
Սառի Միլուօրի.

Սիրելի Տէր Հայր,

Յունիս 21 թուակիր ձեր նամակը առջի օր ստացայ շնորհակալութեամբ:  
Եր խնդրէիք որ Առաջնորդարանիս պաշտօնաթերթերուն հասցէները ուղարկէինք  
ձեզ ձեր հրատարակելիք թերթիկին համար:

Այս մասին Առաջնորդ Արքայան ինք ինք խորհրդակցեցայ եւ եզրակացուցինք  
որ նախ պէտք է ձեր յստակ օրագիրը ներկայացնէք Առաջնորդ Արքայանին, ինք  
համոզուի ըլլալիքին դրական արգիւնքի մասին եւ եթէ պէտք ըլլայ նոյնիսկ  
ձեր հովիւներուն մօտերը պատրաստէ, որպէսզի ապագային ամէն տեղէ  
հարցումներ չըլլան այս մասին:

Երբ Առաջնորդ Արքայանը իր վերջնական հաւանութիւնը տայ, եւ իրեն  
յիշեցնէք հասցէներուն համար, ինք կընայ Գր. Անդրեասեանին թելադրել որ  
ձեր ուղած հասցէները դրկուին ձեզի:

Առ այժմ այսքան, յախողութիւն կը մտղթենք ձեզ ձեր նոր յանդգնութեանց  
մէջ եւ կ'աղօթենք որ միշտ յաշող ընթացքի մէջ ըլլաք ի փառս Աստուծոյ:

Սիրոյ Ողջունիւ,

Վազգէն Ծգս. Գրգորսլեան  
Առաջնորդի փոխանորդ

*letter sent for file*

Գերաշնորհ,  
Տ. Վազգէն Եպսկ. Գրպրըսլեան,  
Առաջնորդական Փոխանորդ Ամերիկահայոց.  
ՆԻՒ ԵՈՐՔ.

Սիրելի սրբազան հայր,

Յուսամ Գանգիստ էք ու եկեղեցական, վարչական գործերուն մէկ ծայրէն կը սկսիք ու միւս ծայրին կը Գասնիք: Յոգնութիւն մըն ալ ես պիտի փորձեմ աւելցնել եթէ զայդ կատարելը սկզբունքի Գակառակ է:

Սեպտեմբեր ամիսէն սկսեալ պիտ Գրատարակեմ Գոգեւոր Թերթիկ մը որ պիտի ըլլայ Աստուծոյ շնորհքով մեր սկսելիք Առաքելութեան Թերթիկը: Ինծի Գամար շատ դժուար պիտի ըլլայ մեր Թեմին մէջ գրտնըւող եկեղեցիներուն Մէյլինկ լիսդերը Գաւաքել: Եթէ կարելի Առաջնորդարանի մէջ Ձեր ունեցած Հայաստանեայց եկեղեցի Թերթին Գասցէները ինծի դրկել, մեծ բարիք մը ըրած պիտի ըլլաք ինծի, խնայելով ժամանակ, սպասում եւ նաեւ ունենալով անբաւարար արդիւնք:

Այս մասին խօսած եմ առիթով մը Առաջնորդ Սրբազան Գոր:

Եթէ կարելի ըլլայ Ձեզի խնդրանքիս գոհացում տալ, Գամեցէք ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՒՆ Գասցէներուն Հայերէնախօսներունը եւ Անգլիախօսներունը գատ ըլլայ:

Սրբազան հայր, ընդունեցէք կանխայայտ շնորհակալութիւններս:

Սիրոյ Ողջունիւ

Աղօթակից՝

*Պրոֆ. Գր. Հարցապատասխան*  
ԳՐԻԳՈՐ ԲԶՅՑ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՍ

21 ՅՈՒՆԻՍ 1968

1419 Mackinac Ave.

South Milwaukee, Wis. 53172



Քիւ 21086  
Յուլիս 19, 1968

Արժանաշնորհ  
Տ. Գրիգոր Զոնյ. Հայրապետեան  
Սառլթ Միլվորթի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Մեր Ուեսթի շրջանին մէջ երեք համայնքներ ունինք, որոնք մնայուն  
հովիւ չունին: Ուստի Ձեզի կը նշանակենք այցելու հովիւ Ուեսթ Փուլմը-  
նի, Սառլթ Միլվորթի եւ Սէյնթ Լուիզի մեր համայնքներուն, որոնց ծխական  
Խորհուրդներուն յայտնած ենք որ Ձեզի հետ հաղորդակցին երբոր կարիքը  
ներկայանայ հոգեւորականի մը այցելութեան:

Վստահ ենք թէ պատշաճ կարգադրութիւն պիտի ընէք Ձեր պարբերական  
այցելութիւնները կանոնաւորելու վերոյիշեալ համայնքներուն հետ:

Մեր թելադրութիւնն է որ Ս. Գաաթագի մատուցման առիթով երբ այցե-  
լէք, Սառլթ Միլվորթի եւ Ուեսթ Փուլմընի ծխական Խորհուրդները Ձեզի յա-  
կացնեն 75.00 (եօթանասունեւհինգ) տուար: Իսկ Սէյնթ Լուիզի ծխական Խոր-  
հուրդը՝ 45.00 (քառասունեւհինգ) տուար, առաւել Ձեր ծամբու ծախքը եւ ըը-  
նակութիւնը:

Համեցէք պարբերաբար մեզի տեղեկացնել Ձեր գործին եւ կացութեան  
մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԱՌԳՈՍ  
Առաջնորդ

Քիւ 21085  
Յուլիս 19, 1968

Մեծայարդ  
Տիար Հէրբի Արոյեան  
Աանապետ Յիսկան Քորնուոլի  
Ս. Յովակիմ եւ Աննա Ակեղեցւոյ  
Ուեսթ Յուլմըն, Երզակո.

Սիրելի Պրն. Արոյեան,

Տ. Գրիգոր ԶԻՆՅ. Հայրապետեանը ներկայիս նշանակած ենք այցելու  
հովիւ մեր այն համայնքներուն, ուր մնայուն հոգեւորական չունինք:

Ուստի կը թելադրենք Ձեզ որ հոգեւորականի կարիք երբ ունենանք  
Ձեր համայնքին մէջ, առաջին առիթով հաղորդակցիք Տ. Գրիգոր Քահանային  
հետ, եւ իր օժանդակութիւնը ապահովէք: Եթէ ինք կարող չէ օգտակար ըլ-  
լալ, այն ատեն կը դիմէք Առաջնորդի Էռնանորդ Կազգէն Արքայեանին:

Տ. Գրիգոր Քահանան երբ Ս. Գառարագ մատուցանելու համար համայնքիդ  
այցելէ իրեն պիտի յասկացնէք եօթանասուն եւ հինգ (75) տոլար:

Մինչեւ որ կարենանք մնայուն հոգեւոր Հովիւ մը ապահովել համայն-  
քիդ համար, պարտաւոր ենք զոհանալ վերոյիշեալ կարգադրութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍՏԱՆԳՈՍ  
Առաջնորդ

Տ. Գ. - Տ. Գրիգոր ԶԻՆՅ. Հայրապետեանի Կացէն  
եւ Ինտիքոսի Քիւր Ինտելեալս Է.-

1419 Mackinac Ave.  
South Milwaukee, Wisc. 53172  
Tel: (9414) 764-2145

Քիւ 21084  
Մուլիս 19, 1968

Մեծայարգ  
Տիար Հէրրի Նապտեան  
Լանապետ Ժապան Խորհուրդի  
Ս. Յարուքիւն Սկեդնցւոյ  
Սաութ Միլվորթի.

Սիրելի Գրն. Նապտեան,

Տ. Գրիգոր ԶԳՆյ. Հայրապետեանը ներկայիս նշանակած ենք այցելու  
հովիւ մեր այն համայնքներուն, ուր մնայուն հոգեւորական չունինք:

Ուստի կը թելադրենք Ձեզ որ հոգեւորականի կարիք երբ ունենաք Ձեր  
համայնքին մէջ, առաջին առիթով հաղորդակցիք Տ. Գրիգոր Զահանային հետ,  
եւ իր օժանդակութիւնը ապահովէք: ՍՔԷ ինք կարող չէ օգտակար ըլլալ, այն  
ատեն կը դիմէք Առաջնորդի Գոթանորդ Կազգէն Սրբազանին:

Տ. Գրիգոր Զահանան երբ Ս. Պատարագ մատուցածելու համար համայն-  
քիդ այցելէ իրեն դիտի յատկացնէք եօթանասունհինգ (75) անլար:

Մընչեւ որ կարենանք մնայուն հոգեւոր Հովիւ մը ապահովել համայն-  
քիդ համար, գարաւոր ենք զոհանալ վերոյիշեալ կարգադրութեամբ:

Սիրոյ ողջունել

ՔՈՐԳՈՍ ԱՐԵՆՊԻՍԿՈՐԳՈՍ  
Առաջնորդ

Յ. Գ.- Տ. Գրիգոր ԶԳՆյ. Հայրապետեանի  
հասցէն եւ հեռախօսի թիւը հետեւեալն է.-

1419 Mackinac Ave.  
South Milwaukee, Wisc. 53172  
Tel: (414) 764-2145

Քիւ 21087  
Յուլիս 19, 1968

Մեծայարգ  
Տիար ժան ժամժամեան  
Առենապետ Թիական Թորհուրդի  
Ս. Շողակաթ Հայց. Եկեղեցւոյ  
Իսթ Սէյնթ Լուիզ.

Սիրելի Գրն. ժամժամեան,

Տ. Գրիգոր Քինյ. Հայրապետեանը ներկայիս նշանակած ենք այցելու  
հովիւ մեր այն համայնքներուն, ուր մնայուն հոգեւորական չունինք:

Ուստի կը թելադրենք Ձեզ որ, հոգեւորականի կարիք երբ ունենանք  
Ձեր համայնքին մէջ, առաջին առիթով հաղորդակցիք Տ. Գրիգոր Քահանային  
հետ, եւ իր օգնականութիւնը ապահովէք: Եթէ ինք կարող չէ օգտակար ըլլալ,  
այն ատեն կը դիմէք Առաջնորդի Թոնանորդ Կազէն Սրբազանին:

Տ. Գրիգոր Քահանան երբ Ս. Գառարագ մատուցանելու համար համայնքիդ  
այցելէ իրեն պիտի յատկացնէք քառասունհինգ (\$5.00) տոլար, առանել  
ժամբու ծախքը եւ բնակութիւնը:

Մինչեւ որ կարենանք մնայուն հոգեւոր հովիւ մը ապահովել համայն-  
քիդ համար, պարտաւոր ենք զոհանալ վերոյիշեալ կարգադրութեամբ:

Սիրոյ ողջունիւ

Տ. Գրիգոր Քահանային հասցէն եւ  
հեռախօսի թիւը հետեւեալն է.-

1419 Mackinac Ave.  
South Milwaukee, Wis., 53172  
Tel: (414) 764-2145

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵԳՈՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ